

## ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

### ՄԵՐ ՊԱՐՔԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Թիւ 10-ի Խմբագրականը նը-  
փրւած է Ասուածաշնչի հա-  
Սի՛ն յերէն քարգմանութեան 1500  
ամեակին (434 - 1934)։ Մի  
ոգեշունչ ներբռղական, ուր  
վեր է համուռմ Ասուածաշնչի դերը հայ  
ազգութեան կազմաւորման - «իրեւ ազգ  
իմբնակերտումք» - և հայերէն լեզի  
ձեւակերպման - «վերջմական կազմու-  
թեան» - և գարգացման - «հայերէնը  
տիրացաւ իր իմբնութեան» - գործում։

«Հայկական ոստանիկ լեզուն հոն հա-  
ւաթեց լրութիւնը իր գանձարանին, արա-  
րատնան ոսկի բարբատին եւ տարօնեան  
եւ ուրիշ գլխաւոր գաւառարաններուն  
ընտրողական համադրութեան մէջ բի-  
րեղացնելով ազգային մտածումին բնիկ  
դիմերը, եւ մերինին մէջ բերելով եւ  
հիւսենով աւելի բարձր ու գարգացած  
ազգերու մտածողութիւններէն փոխան-  
ցարար իբրարու հաղորդաւծ կամ ուղղա-  
կի ժաղած գեղեցկութիւններք։ Ասու-  
ածաշնչն է, որ «քարոյապէս վերա-  
կացնեց կործանումի մօտեցած մեր նիւ-  
թական կիամքը, եւ շինեց եւ աւելի ա-  
մուր հիմերու վրա կանգնեց զմեզ իբրեւ  
ազգ եւ իբրեւ եկեղեցի»։

Ասուածաշնչի, այսիմքն՝ քիստոնեկա-  
կան կրօնի հայ կենացքում կատարած  
ազգային - ժաղաքանամ դերի եւ բարո-  
յական - դաստիարակչական արժեքի  
մասին ներելի է ունենալ - եւ ունիթ,   
անշուշտ, - եկեղեցականներից տարրեր  
տիսակետներ, բայց ինչ որ վերաբեր-  
ում է հայերէն լեզին եւ հայոց մշա-  
կոյթին՝ հատարելազէս համարիս ենք  
«Սի՛ն»-ի հետ։ Ասուածաշնչի հայերէն

քարգմանութեան դերը եղած է շատ  
մեծ։ Եւ այդ պատճառով բոլորովին  
չենք հասկանում «սինականների» մը-  
տավախութիւնը. ինչո՞ւ չտօնել այդ  
հշանաւոր երեւոյրի յօրելեանը։

«Սի՛ն»-ի № 10-ում վերջանում է  
Տիկ. Պրոն. Քեօրբիւլեանի «Լեհաստա-  
նի Հայերը» յօդաձը՝ սկսած № 7-ից։  
Յոդածի վերջում հետաքրքրական տե-  
ղեկութիւններ են տրւած լեհահայերի  
ներկայ վիճակի մասին։ Այսօր լեհաս-  
տանում ապրում են շուրջ 10,000 հայեր,  
որոնց կեսը լվովի հրամի գլխաւոր քա-  
ղաքներում։ Լեհահայերի մէկ մասը զգ-  
րադաւում է վանականութեամբ, ու-  
րիշներ՝ պաշտօնեայ, բժիշկ, փաստա-  
րան, նարտարագէտ, հողատէր։ Լե-  
հաստանի հարաւ - արեւելեան մասում  
շատ հողեր դեռ հայերի ձեռքն են։

Տիկ. Քեօրբիւլեանի յիշում է մի շարք  
յայտնի լեհահայերի անուններ, որոնք  
աչքառու տեղ են գրաւում լեհերի մէջ։  
Այսպէս, «արբայ տօքր. Յովսէփ Թե-  
տորովիչը ծանօթ է ամրող լեհաստա-  
նի մէջ։ Անիկա լվովի արքեպիսկոպոսն  
է 1902-էն ի վեր։ Անունի է անիկա իբ-  
րեւ նարտարախօս եւ մտանագիր եւ  
հայրենասէր, եւ իբրեւ այդ շատ զը-  
նահատած է ամրող լեհ ժողովրդէն»։  
Բացի այդ, «վերջերս քարգարի հայ  
անուններ արձանագրւցան լեհաստանի  
պատմութեան մէջ։ Տօքր. Յովսէփ Թո-  
ռոսովիչը, բարեկամ եւ պաշտպան երի-  
տասարդութեան, կրթական եւ ուսում-  
նական հաստատութիւն մը կիմեց ե-  
րիտասարդաց համար... Դաւիք Աքրա-  
մովիչ, լվովի մէջ երիտասարդմերու

համար ի իմաստ է զիշերօթիկ մը եւ ծերերուն համար՝ անկելանց մը։ Իր նըկաբներու հաւաքածուն ընծայ ուած է կրաքովիս ազգ։ Քանզարանին։ Նոյն այդ Մուլգեռնին մէջ կայ ուրիշ քաժին մը, որ յատկացւած է ուրիշ հայու մը՝ Երազմու Պարոնչի ընծաներուն։

«Ճայերը լեհաստանի մէջ... լայնօրէն  
օգտակար եղած են նաև լեհական ար-  
ևստանիքու եւ զիտուրեանց յառաջդի-  
մուր եան: Ամենէն ամսանի նկարիչնե-  
րու կարգին պէտք է յիշել Օգոստին—  
վիչը, Աստոն Ստեփանովիչը եւ Կիտան  
Ստեփանովիչը, որ հերոսաբար մեռաւ  
1920ի ուսու-լեհական պատերազմին մէջ:  
Եղիսաբէտոս Նիկորովիչը, բանաստեղծ եւ  
գրաքէտ, պատույ տեղ մը կը գրաւէ լեհ  
գրականուրեան մէջ: Հեղինակ է բազ-  
մարի քառերկերու եւ կլովի գրական  
մրցանակին արժանացած է 1930ին: Ա-  
նոր հայրը, Յովսէփ Նիկորովիչը, հեղի-  
նակն է «Երգարան»-ին, որմէ ներշնչած  
է Գործի Ուշյուքի՝ լեհական ազգային  
երգին համարողը:

«Եկեղական գիտուրքեան մէջ կարեւոր տեղ մը զբաւած է ժան Պոլոց Անտոնի-վիչ, պատմազէտ արևեստից, որ մեծ հմտուր իւն ունի լինական նկարչուրքեան մասին։ Ռւսուցապես եղած է ժան Գաղմիրի Համապարանին մէջ ի Լվով։ Ուրիշ հայ մը, Պոլտան Դասիքովիչ, 25 տարիներ դասախոս եղած է նոյն համալսարանին մէջ»։

Լեհական պատմութեան մէջ նշանա-  
ւոր դարձած հայերի ցանկում Տիկ-  
Բէօքրիւիհանը յիշում է Կարսն Միհովի-  
անունը. «աշակերտ Շորէնի, երկար տա-  
րիներ տնօրէնի եղան Լվովի երաժշտա-  
նոցին: Իր կեամբը նիկեց մեծ երգա-  
հանին գործերուն ուսումնասիրութեան,  
և եռասպասիեց անոր բոլոր գործերը»:

Բազմարի հայեր օժանդակած են լե-  
հական մշակոյքին: Ասոնց մէջ պէտք  
է յշել Ժիւլիոս Սլովացքի, որ հայ-  
էլիօն եղումէն:

Տեսական պատճենների մասին երկու էջ էլ նուհանությունը պահպանվում է առաջարկության մեջ:

բում է Քուրի հայաքաղաքին, որ զբանում է ուսմանական սահմանի մօտերք։ Հեյս քաղաքը, ուր հայերը կը բնակիմ մը դպրու սկիզբեն ի վեր, պահած է իին հայոց բուռք աւանդութիւնները։ Անիկա այսօր ալ դեռ կը նկատի լեհահայոց մայրաքաղաքը», բայց աւա՞զ, «հայ լեզուն ծերերն է միայն որ կը գործածեն ընթացիկ կեանքի մէջ»։ «Քուրի մէջ հայկական դպրոց մը կար ժը դպրեն ի վեր։ Մինչեւ անցեալ դարու կիսաւն գոյուրին ուներ անիկա, եւ անոր շնորհիւ է որ հայ լեզուն պահած է այդ սահմանին մէջ։ Մեր օրերուն, ան չկայ այլւու։ անոր համար է, որ այս քաղաքին հայ երիտասարդները ա'լ չեն գիտեր իրենց լեզուն։ Հայ քահանաները ուսկատին կը գործածեն եկեղեցական պաշտամունքի լեզուն»։ Փառաւոր անցեալից յետոյ, «ներկայիս Քուրեցի հայերուն իին հարսութիւններուն յիշատակը միայն կը մնայ»։

Զիտենք ո՞ւմ դիմել, բայց ականջ  
ունեցողը բռդ լսէ, կարողութիւն ունե-  
ցողը բռդ մոածէ այս մեր աչքի առ-  
ջև կարչող մի բռու հայ զամբաւածի  
փրկուրեան մասին։ Շատ բան չէ պա-  
հանջանած. վերաբանալ այն դպրոցը,  
որի շնորհիւ «հայ լեզուն պահաւած էր»։  
Տալ Քուրքիի նոր սերմեղին հայերէն լե-  
զու հանակում է փրկել նրան ազգային  
կորստից։

Մինչ «Սինե»-ը վարանումների մէջ է, իր եղբայրակից

**ՀԱՅԿ** «Հասկ»-ը, Կիլիկիոյ կարուղիկոսութեան պաշտօնական բերանը նոյեմբերի (№ 11)

համարում երատարակել է Ամենայն Հայոց Կարուղիկոսի 1 հոկտ. կոնդակը Ասուածաշնչի «ըսկեղեն քարգմանութեան» 1500 ամենայի մասին, որով 1934 թւականը, այս տարւայ Թարգմանչաց Տօնից սկսած մինչեւ յաջորդքը, յայտաբարում է յորելինական տարի եւ երահանգում է կատարել տօնական հանդեսեր: Առ այդ, երուսաղեմի Պատրիարք Թորգոն Արքեպ. կարգում է՝ «որ-

պէս զներկայացուցիչ Մեր եւ գրեկալար կազմակերպութեան գործոյս ի մէջ հաւատացելոց ի սփիւս Արտասահմանի, հաստատելով զատանձին կեդրոնական Յանձնաժողովը ընդ նախագահութեամբ իւրով եւ մասնակցութեամբ մի մի ներկայացուցաց Շնորհազարդ Կարուղիկոսացն Տաճն Կիլիկիոյ եւ Ամենապատի Պատրիարքին Կ. Պոլսոյ»:

Ուրիշ խօսքով, յորելեանին տրում է գուտ կրօնական-եկեղեցական կերպարանք: Ճիշտ է, Սահակ Կարռողիկոսի անունով տրած մի ուրիշ կոնդակում ենորէն Կարռողիկոս ասում է, քէ՝ «Մեր ցանկութիւնն է, որ այդ մեծ եղելութիւնը մեր ազգի եւ եկեղեցու պատմութեան մէջ զստ արժանուոյն վերազընահատի հայ ժողովրդի կողմից», բայց «ազգ» ու «ժողովրդ» այսուն հասկացում են սոսկ եկեղեցական իմաստով: Ի հարկէ, Աստուածաշնչի տօնը նախ եւ առաջ կրօնական-եկեղեցական տօն է եւ հասկանալի է կարուղիկոսների ու պատրիարքների նախաձեռնութիւնը: Մեզ այդ յորելեանը հետաքրում է բացառապէս մշակութային տեսակետից: Ի՞նչ դեր է կատարել այդ գրքի հայերէն քարգմանութիւնը հայ մշակոյթի - լեզուի ու գրականութեան կազմաւորման ու զարգացման գործում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄ-  
ՍԱՐԵՐԾ՝ ԱՆԻՔՐԱՎ  
ՔԸՑ - ԲՈՅՑ ՔՃՂՈՒԹԵԱՆ :  
Ակսաւ հրատարակ-  
ւել հոկտեմբերից թժ. Շ. Այլազեանի  
(Շ. Նարդունի) Խնմազքութեամբ: Նը-  
պատակն է՝ «պահպանել մեր ցեղային  
առաջութիւնը, Փիզիքապէս ազնացնել  
երիտասարդութիւնը, հոգեկան ներքին  
ուժերու ժառագայթաւորումով մը օժ-  
տել հայ անհատականութիւնը եւ հայ  
դիմագիծը»: Այս նպատակին հասնելու  
համար Հայ-Բոյց «կառաջադրէ տալ ա-  
ռողջապահութեան եւ քՃղկութեան մա-  
սին օգտակար ու լայն տեղեկութիւն-  
ներ, միաժամանակ մարմնակրութեան

եւ իմացական ուժերու մարզանքին սէ-  
րը արբնցնել մեր ժողովրդին մէջ»:  
«Հայ-Բոյց»ը - «ախտի խօսի ժողովուր-  
դին՝ անոր հասկնալի ձեւով միայն»:  
Երկու բառով քերքի ծրագիրը՝ «Առող-  
ջուրիւնն է մեր աստուածը»: Մի խօս-  
քով՝ ժողովրդական հանրամատչելի ա-  
ռողջապահական քերքը, կամ՝ «Տաւեին  
բժիշկը»:

«Հայ-Բոյց»-ի առաջին թիւը հաստա-  
տում է, որ «Խնմազքական խոստում-  
ները անիմն չեն: «Անոնց որ կը սար-  
սափին հիւծախտէն»՝ տօքք. Գ. Շարա-  
յեան, «Ե՞րբ կարելի է յդի մնալ»՝ տէ-  
լ. Գրիգորեան, «Ծխսո՞լ քէ չծխել»՝  
տօքք. Ա. Աշնեան, «Վիրաբուժական  
Քէշէկ», «Տիկին, երախսադ չի՞ ֆնանար»՝  
Մեծ Հայրիկ, «Հիւրաբուժութիւնը  
Հայոց մէջ» Կ. Յ. Բասմաջեան, «Կե-  
րակուրենքը քունաւո՞ր են երք ալիս-  
մինումէ ամանի մէջ կեփիմն»՝ տօքք.  
Բ. Հ. Նազարյեան, «Երեւանի խաղողնե-  
րը»՝ Քալիան, «Լօշտակ» Գ. Վրդ. Ար-  
ւանատեանից, «Որովայնի ժամանակնեղին  
դէմ»՝ տօքք. Շ. Այլազեան, «Երածշ-  
տարութուրիւն» Շ. Նարդունի - ահա  
այս թիւ բոլանդակութիւնը: Յօդած-  
ները կազմած են սիրով, պարզ ու հաս-  
կանալի, մաքուր եւ հիւրալի հայերէ-  
նուլ: Երէ մի շարք յօդածներին կցւած  
լինելին եւ նկարներ, ընթերցողը աւելի  
դիւրութեամբ կօգտէր նիւրից:

«Հայ-Բոյց»-ի երեւումով փակուում է  
մի բաց, որ զգակի եր մեր կեամեռում:  
Հետզիւտէ պէտք է զգել եւ ուրիշ բա-  
ցեր: Այսպէս, մեզ թւում է, վարուց  
արդէն հաստացել է մի պատկերազարդ  
- բնամեկան շարաբարերի պահանջը  
- մի թերթի, որ տայ հայերէն թերեր-  
ցանութեան առողջ նիւր ու նաշակաւոր  
պատկերներ, որ շարքէ-շարաբ տեղեակ  
պահէր ընթացիկ կեանքին - արւեստ ու  
գրականութիւն, խոհանոց ու նորամեռու-  
թիւն, զրու ու գլարնութիւն - մի խօս-  
քով՝ լինելու տան թերը:

Զգալի է եւ կենացնի ու լաւ խնմա-  
զքը մանկական հանդէսի պէտքը:

Արտասահմանի բազմահազար հայ նոր սերունդը հայերէն ընթերցանութեան նիւթ քիչ ունի - լաւ կազմւած, խնամւած արտաքինով, պատկերազարդ։ Եղած մանկական հանդէսները, ընդհանուր առումը, տեղական բնոյք ունին։ Թիֆլիսի «Հասկեր»-ի պէս մի կենդանի եւ ընդհանրական գործ պէտք է սունդել, որ, անտարակոյս, հեշտ չէ, բայց հնարաւոր է։

Վերջապէս, կարիք կայ եւ մի մանկավարժական - դպրոցական - կրթական հանդէսի։ Պատկառելի բովով դպրոցներ ունինք արտասահմանում, խոչըր ֆանսիուրեամբ ուսուցիչներ եւ կրթական գործով հետաքրքրող մարդիկ։

Մի լաւ խմբագրւող, լուրջ հանդէս կարող էր մեծ ծառայութիւն մատուցանել մեր կրթական զործին ու զործիչներին։ Սպասելի էր, որ այս թիրին լրացներ Համազգայինը իր ձեմարանով, բայց, երեւի, նիւթական դժւարութիւնները արգելվ են եղել նրան ցարդ այդպիսի մի ձեռնարկի իրականացման։ Կարող էր եւ պարտական էր Բարեգործականը անցնել նման զործի - գլուխ, բայց այս հիմնարկութիւնը, ըստ երեւոյթին, աւելի սուր եւ անյետաձգելի մտահոգութիւններ ունի, քան կրթական - մշակուրային գործը - կուսակցութիւն խաղալ եւ գաղուրակայ կեանքի քայլայման ծառայել։

### ԴՐԱՑ Ա. Ա. Ա. ԲԵՂԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՔՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ - Բերլինի Հետ-  
schrift für Politik (Քաղաքացիական Հան-  
դէս) ամսագիրը, որ Գերմանիոյ ինն եւ  
Քաղաքակրթական առաջնակարգ կրտ-  
սարակուրթիւններից մէկն է, զետեղել  
է Դուստ. Արտաշէս Արենեանի մի ըն-  
դարձակ տեսուրինը, «Քրդական հըն-  
դիրը» վերնագրով։ Գրածքը արտասով-  
ուել է եւ առանձին, սահմանափակ օրի-  
նակներով։

Հետեւեալ հատւածների է բաժանւած  
աշխատառութիւնը. - Քիրդիտան՝ աշ-  
խարհագրական տեսակէտից։ Բնակչու-  
թիւն։ Քիրդերի ցեղային ծագումը,  
լեզուն, բարբառները եւ ծողովրդական  
րանահիւսուրթիւնը։ Պատմական անցեա-  
լը։ Քիրդերի կրօնը, ընկերային բաժա-  
նութենքը եւ տնտեսական գրադումները։  
Քիրդ ցեղերը. - Քիրդերի պատագը-  
րական շարժուները սկզբից մինչեւ  
այժմ։ Քիրդերի ազգային - քաղաքա-  
կան ծրագիրը, Տաթկաստանի սահման-  
ներում։ Քիրդերը իրավում եւ Պար-  
կասատանում։ Անգլիայի եւ Ռուսաստանի  
գիրքականամուրթիւնը քիրդերի եւ Քիր-  
դականամուրթիւնը գիրդերի եւ գիր-

դական գիրդերի շարքի։ Զուգահեռ-  
ուարար տրում են արեւելակայ եւ ա-  
րեւմտակայ գրական բարբառների ժե-  
րականական կանոնները։ Առաջին փորձն  
է կառարում այսպիսով՝ կազմելու ար-  
դի հայերէնի երկու նիւդերի ժերակա-  
նուրթիւնը իրեւ մի ամբողջուրթիւն եւ  
մէկ հատորի մէջ։ Դասագիրքը սահ-  
մանւած է զինաւորապէս ձեմարանում  
հայերէնի դասընթացին հետեւող գեր-  
ման ուսանողների գործածուրթամ հա-  
մար։ Խնչպէս յայտնի է, 1926 թ. ա-  
մարային կիսամետակից սկսած։ Պրու-  
սիոյ կրթական նախարարի հրամանա-  
գրով Արեւելեան Լեզուաց ձեմարանում,  
ի թիւս արեւելեան ուրիշ լեզուների,